ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ
ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԻԱԳԱՀ
ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Երևան

Հարգարժան Տիար Նախագահ,

Դիմավորում ենք Նոր տարին և Սուրբ Ծննդյան տոները, մեր հայացքը դեպի երկինք, աղոթքով սրտեռանդ, որ բարին Աստված մնա Ձեզ օգնական և զորավիգ Ձեր հայրենանվեր առաքելության ճանապարհին, մեր օրերի դժվարին ու տագնապալի պայմաններում: Աղոթում ենք Ձեզ մշտանորոգ եռանդ ու լավատեսության ոգի:

Ողջ լերուք զորացյալ Սուրբ Հոգով:

Հայրապետական օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳ ՎԱՐՉԱՊԵՏ
ԽՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Երևան

Հարգարժան Տիար Վարչապետ,

Նոր տարվա սեմին և Սուրբ Ծննդյան ավետիսով բերում ենք Ձեզ և Ձեր գործակիցներին Մեր մաղթանքը՝ կայուն առողջություն և հայրենաշեն աշխա-

տանքի անսպառ եռանդ, հաղթահարելու համար մեր ժողովրդի առաջ այս օրերին ծառացող ծանր դժվարությունները:

Նոր տարին թող իր հետ բերի լրումը մեր ազգային արդար իղձերի՝ խաղաղությամբ ու բարօրությամբ:

Ձեզ արևշատություն և օրհնություն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ
ԼՅՈՒԴՎԻԳ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Երևան

Հարգարժան Տիար Խաչատրյան,

Նոր տարվա շեմին Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսով բերում ենք Ձեզ Մեր ամենաբարի մաղթանքները Ձեր արևշատության և Ձեր հայրենանվեր գործոց հաջողության համար՝ այն հավատով, որ մերօրյա տագնապալի կացությունները շուտով կվերանան, և մեր ժողովուրդը կգտնի իր կյանքի խաղաղությունը՝ իր արդար իղձերի կենսագործմամբ:

Հայրապետական օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տեր,

Շնորհավորում եմ Ձեզ Ամանորի և Սուրբ Ծննդյան առթիվ: Մաղթում եմ, որ Նոր Տարում թեթևանան մեր ժողովրդի հոգսերն ու հաղթահարվեն դժվարությունները:

Թող նոր՝ 1993 թվականը մեր երկրի համար լինի խաղաղ, լուսավոր ու երջանիկ տարի:

Հարգանքով՝

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

* * *

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տեր,

Ընդունեք իմ ջերմ բարեմաղթությունները Սուրբ Ծննդյան և Ամանորի առթիվ:

Օգտվելով առիթից, կամենում եմ գոհունակությամբ նշել Ձեր հայանպաստ, համախմբող գործունեությունը և, ցանկանալով Ձեզ քաջառողջություն, հույս հայտնել, որ այդ գործունեությունը 1993-ին կլինի ավելի արդյունավետ և բեղմնավոր:

Թող 1993 թվականը խաղաղության և բարօրության տարի լինի Հայաստանի, հայ ժողովրդի, ողջ աշխարհի համար:

Ամենայն բարիք Ձեզ, ուժ և կորով:

Խորին հարգանքով՝

ԽՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Երևան

* * *

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Սիրելի Վեհափառ Տեր,

ՀՀ Կառավարության և Կրոնի գործերի պետական խորհրդի անունից ջերմորեն շնորհավորում ենք Ձերդ Սուրբ Օծության Ամանորը և Սուրբ Ծննդյան տոնը:

Մեր ազգի համար այս ծանր օրերին Ձերդ Սուրբ Օծության ազգաշեն գործունեությունը արդեն իսկ հոգեկան մխիթարության և լավատեսության լիցքն են տալիս մեր ողջ ժողովրդին: Մենք վստահ ենք, որ այս ծանր փորձություններից էլ պիտի կարողանանք պատվով և արժանապատվությամբ դուրս գալ՝ ուղենիշ ունենալով մեր ազգային գերագույն շահերը, առաջնորդվելով պատմական պահին արժանի իմաստությամբ և եռանդով: Վստահ ենք, որ այս ճանապարհին Հայ Առաքելական Եկեղեցին Ձերդ Սուրբ Օծության իմաստուն առաջնորդությամբ իր արժանի ներդրումը կունենա:

Սիրելի Վեհափառ Տեր, ցանկանում ենք Ձերդ Սուրբ Օծությանը առողջություն, երկար տարիների կյանք, անսասան վճռականություն որդեգրած գործունեության մեջ, ի փառս մեր հրաշալի ազգի, ի փառս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, ի փառս մեր Տեր Յիսուս Քրիստոսի:

Լավագույն ցանկություններով և
ամենախոնարհ որդիական սիրով՝

ԼՅՈՒԴՎԻԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան